



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Р.Л. Чеп-Чеховский

Избранное

10/18, 1906/0

891.99

S - 38

891.99

S-38

ԱՐ

ԲԵՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵՍՆ

# ՀԱՅՈՑ ՔԱԶԵՐ

ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆ



(Արտատպած «Յոյս» շաբաթաթերթից)



ԹԻ ՖԼԻՄ

Պրագատիպ Ա. Վ. Քութատելաձէի. Փրկվնսկալա № 12.  
1906

623

2003

# ՀԱՅՈՑ ՔԱԶԵՐ

ԴԻԿԱՅԱՆԵՐԳՈՒԹԻՒՆ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

«Ո՞ տալր ինձ զծումս ծխանի  
 Զառաւոտն նաւասարդի  
 Ի վագել եղանց  
 Նւ ի վագել եղջերուաց:  
 Մեք փողս հարաք  
 Եւ թմբկի հարկանէաք:

Ձօվոլ. ցենզ. 25-ը Մարտ 1906 թ. գոր. Տիֆլիս.

**Արդեօք պիտ տեսնենք, որ աւեր սիւզեր**  
**Կրկին չէնացած կը բարգաւաճին**  
**Ու ծիրանի ծուլսն կելուէ զէպի վեր**  
**Վաղ առաւոտեան արևածագին,**  
**Ել մի կըտայ մեղ ազատ, անսասան**  
**Տօնել ազգային նոր տօն ցնծութեան.**  
**Երգեր երգելով գնալ ընդ առաջ**  
**Հայոց նոր տարուն նաւասարդ կոչուած:**  
**Մի կըթողու, որ մեր անտառներ,**  
**Ֆործոր ու ձորերն, դաշտ ու հովիտներն,**  
**Վիստան էրէլով ու այծեամներով,**

Որոնց որսալու գնանք խմբերով:

—Մե՛նք, խելքով, մտքով,

Արիւն, քըտինքով,

Զայնեցին մէկտեղ զրիչն ու բրիշ,

Արձագանք տւեց սէգ հայդուկ կտրիճ։

—

Ե Ր Գ Ա Ռ Ա Զ Ի Ն

ԴԻՒՑԱԶՆ ՀԱՅԿ.

Ահա եկաւ դիւցազն Հայկ

Երեք հարիւր քաջերով,

Չեռին բռնած լայն աղեղը

Երերթիեան սլաքով,

Ու կանզնեցաւ ծովափի մօտ.

Նայեց դէպ ներբովտ, Գրգուռ,

Որոնց կատարն են ձիւնապատ,

Կուրծք, ստորոտ ծաղկասփիւռ:

Խնչեր ասես, որ չէր անցնում

Նորա խոհեմ վեհ մտքից...

Ոհ, շուտ թոշել բարձրագագաթ

Նմատշելի լեռներից,

Ու ամպերից էլ դէպի վեր

Արծուի հետ սաւառնել,

Ու այնտեղից ուժգին թափով

Սլաքի պէս վար թռչել

Եւ իւր ռսովս, ախոյեանին

Տեղն ու տեղը տապալել,

Նորա զօրքն ու զօրութիւնն էլ

Զարդ ու փշուր խորտակել:

Եւ կամ սաստիկ մըրկի պէս

Ընկնել ծովի զրի մէջ,

Լեռնածկ մեծ կոհակ ձուլած՝

Տակից հանել օդի մէջ,

Ահեղակոչ ու փրփրադէզ

Թափել թշնամու գլխին

Ալիքների մէջ թաղելու,

Տալ կերակուր ձկներին:

\* \*

Խայտակն աշքերն այս կողմ դարձուց

Տեսաւ շուրջը պար առած

Իւր որդոցն ու թոռներին,

Որոնք կարգով են կապնած:

Արեգակի պէս աշքերից

Կրակ ու բաց էր թափում

Ու լայնապինչ ոռւնկներից

Թանձր ծուխ էր բարձրանում:

Գեղապատշաճ դէմրն համակուած

Արդարութեան զայրոլթով,  
Կուզէր իսկոյն շարին պատժել  
Իւր կորովի հաստ բաղկով:  
Ստվաւարտն, որ սեղմել էր  
Քաջազննուր մեծ զլուխ,  
Վայր առաւ ու մի կողմ դրեց  
Եղաւ գործին ձեռնամուխ.  
«Իմ սիրելի զաւակներս  
Ահա թէլը գալիս է,  
Որ բոլորիս էլ կոտորէ.  
Մեր տուն ու տեղն թալանէ,  
Մեր կանանցն ու տղջերանց  
Իրեն գերի գարձնէ,  
Եւ այս զեղեցիկ լիոներին,  
Կասոյտ ծովին, դաշտերին  
Իշխան լինի որդոց որդի  
Աղատ հանգիստ կեանք վարի:  
Խոկ թէ որ մենք յազթենք նրան,  
Տէր կը զառնանք մեր երկրին,  
Մեր որդոցն ու զաւակներին  
Կը փայտայնք կաթոզին.  
Հարս ու աղջիկ էլ չեն ընկնի  
Գերի օտար աշխարհում,  
Սիրով, պատւով կապրեն ձեղ հետ

Ուրախ, զուարթ, անտրասւմ:  
Ի՞նչ էր ասում, դէ, ձայն տւէր.  
Ընտրեցէր, ինչ ուզում էր.  
Զեր առաջ կայ երկու ճամբայ—  
Դիւցազնական կուի մէջ մահ,  
Կամ ստրկի անարդ կեանք»:  
— Կասկած շըկայ, դիւցազն Հայրիկ,  
Որ մեզ մահն է ցանկալի,  
Դէթ շըտեսնենք մեր ընտանեաց  
Նախատինքը գարշելի,  
Ու աւերը Հայկաշնի,  
Ու չի մնայ քար քարի,  
Այսպէս լուսից Արմենակը  
Երէց որդին բաջարի:  
— Թող ծաղկածին դաշտերի հայոց  
Ծըծէ արեան յոըդ շիմեր.  
Թող ներկուին մեր արիմով  
Ծովի ահեղ ալիքներ,  
Թէ չենք ուզում, որ բռնովնեան  
Ծանր լծի տակ ճնշուած՝  
Թափենք որցունք ու ողողինք  
Սուրբ հայրենիք պղծուած.  
Այս իմ խորին համոզումն է,  
Պատասխանեց եւ Կաղմոս:

Նահապետի առաջն եկաւ  
Նորա եղբայր մեծ Քարտլոս  
Ու կանգելով մօտ՝ դէմ ու դէմ  
Տուեց այսպիսի հարցեր.  
— Ի՞նչ ենք զործել մենք Բելի դէմ,  
Ի՞նչ է ուզում մեզանից,  
2Է կարելի պատուինք, յարդենք,  
Որ ազատուենք այս կուից:  
Կասենք, բարձվ, հազար բարի,  
Դու մեր հիւրն ես, համեցէք.  
Այս դաշտերից բաժին առէք,  
Ինչը կուզէք, ցանեցէք:  
Ծովից մէկտեղ ձուկ կը բռնենք  
Կուտենք սիրով միաբան  
Խաղողից էլ գինի քաշենք,  
Խմենք, իրար կասենք ջան:  
— Ամրաբտաւան մեր թշնամուն  
2Ենք տւել ոչ մի զիան  
Այլ հեռացանք մենք նրանից,  
Ամեն ինչ թողինք իրան:  
Սակայն զիտցիր, բարի եղբայր,  
Որ քեզ նման միամիտ  
Աշխարհիս մէջ շատ քիչ մարդ կայ,  
Այն էլ կոշտում է անմիտ:

Նա մեզանից պահանջում է  
Ծառայ լինել իւր կամքին  
Ու ամեն օր երկրպագել  
Իւր զգւելի պատկերին,  
Իրան պաշտել Աստծու տեղ  
Խունկ ու մոմով, մատաղով:  
Դեռ այս ինքն է. իսկ իրեններն,  
Ո՞հ, մարդ-գազան հրէշներ,  
Բիրտ ու սոպու, զոռոզ, տխմար,  
Ապականուած են բարքեր:  
Մէկ էլ տեսար ահա եկան  
Անբնական քայլերով,  
Կուրծք ու թիկունք պինդ ծածկել և  
Պղնձեայ հաստ տախտակով.  
Սրունքներն սոնապաններ,  
Թիերն անին թենոցներ,  
Զէնքերն են մեծ ու շատ ծանք,  
Իրանց ուժից էլ շատ վեր,  
Մէկը կարճիկ, փորքիկ մարդովկ  
Աքաղաղի պէս ճեմում,  
Միւսն հաստլիկ, մտրով խղճուկ,  
Արտգ արագ է զնում:  
Սնացածն հսկայ ու զիթխարի,  
Դէմքով զածան անճոռնի,

Բնաւ չունին ոշ մի շնորհք  
Բանականին արժանի:  
Այնքան տխմար են՝ կուբացած  
Մտքով, հոգով են սևացած,  
Որ միմիայն ամբարտաւան  
Բէլին պերի են դարձած.  
Երբ որ քնից արթնանում են,  
Խսկոյն խելազարի պէս  
Վաղում դէպի նորա պատկեր,  
Ու պաշտում են Աստօւ պէս-  
Նա այնքան չի իրեն կարծում,  
Որրան սրանք բարձրացնում,  
Զրիակեր կեանք վարելու  
Անարդ սերունդ բազմացնում.  
Նա դիտէ որ ինքն էլ մեզ ուէս  
Մարդ է և ոշ թէ, Աստուած,  
Ի՞նչ անենք, որ բարձր հասակով  
Ու յաղթանգամ է ծնուած:  
Այժմ ի՞նչ օպուտ կարող է տալ  
Խեղճ ու թշուառ ամբոխին  
Մեծամարմին այդ ալբարած  
Բացի վնասն գլխովին  
Սակայն ասուշ պղերգները,  
Ենգործութեան յանձնուած,

Մի այլանդակ միտք յղացան,  
Հար գործերը թազցրած.  
Չուկել տուին այն վիթխարի  
Ահեղ արձանն պղնձեայ,  
Ու կանգնեցին բարելացոց  
Աշխարհի մէջ Դիհերա:  
Գախսուն կանգուն էր բարձրութիւն  
Եւ լից կանգուն բայնութիւն,  
Ու անգաղար ընդունում էր  
Անթիւ զոհ ու օրհնութիւն:  
Այսքան թշուառ ոգորմելի  
Մարդկանց հետ մնենք բնչ անենք.  
Միթէ հնաը է, որ մեղ թողնեն  
Ազատ, հանգիստ աշխատենք,  
Եւ կամ թոցլ տան, որ մեր տուն ակա  
Կառափարենք մեր խելքով:  
Նրանց միակ նսպատակն է  
Տիրել, իշխել բիրա ուժով,  
Որ ուրիշ վաստակն ուտեն,  
Ապրին չույլ ճոխութեամբ,  
Ջատացնեն հարճ, աղախին.  
Ու կհանք վարեն ցափութեամբ:  
— Ուրիմ մեր քոյլ ու աղջիկ  
Պիտի դառնան աղախին.

— 12 —

Գոռաց յանկարծ արին Կադմոս,  
Զեռքը զտրկեց ազեղին՝  
Հերիք խօսենք Ելէր գնահնը,  
Մեռնինք և կամ մեռցնինք։  
— Դնանք, դնանք, աջից ձախից  
Ու թշնամուն տապալենք,  
Ասաց վեհանձն Արմենակը,  
Յոյց տանք մեր ուժ, զօրութիւն,  
Ու շըտեսնենք ստրկական  
Անարդ շղթան—բանութիւն։

\* \* \*

Մինչդեռ այսպէս մեր քաջերը  
Մի սիրտ, մի հողի եղած,  
Պատրաստ էին ախոյնանին  
Հետ կուելու տնձնուրաց,  
Մէկ էլ տեսան Հայկանդուխտը  
Հայիի սիրուն աղջիկը,  
Մի խումբ ազգիանց աւաշն ընկած,  
Դալիս էր դէպ բանակը։  
Իրաբանցում տիրեց այնտեղ,  
Կադմոս թէն համարձակ  
Կուդէր գնալ նշանածին  
Յետ դարձնել դէպի Հարր,  
Ու այնպիսի անմատչելի

Փապարի մէջ պինդ պահել,  
Կիրն էլ այնտեղ անքուն աշրով  
Զէնրը ձեռքին միշտ հսկել,  
Որ թշնամին չը համարձակի  
Անգամ այն կողմը նայել։  
Այսպէս էին և մտածում  
Հայոց գնդի միւս քաջեր...  
Սակայն ուշիմ զօրապետը  
Առաջ անցաւ ու առաց։  
— Ո՞հ, իմ ձքնաղ կստրիկներս,  
Ինչո՞ւ եկաք մեր առաջ։  
Զեր այդ հրաշագեղ պատկերի  
Ցոլըն ու վայլը անպատճառ  
Ունի ուժգին ազգեցութիւն  
Կուող տղայոցն համար,  
Եւ կարող է զինւորական  
Կարդ ու կանոն խանգարել.  
Ջուտ այսակից գուք յետ դարձէք,  
Քանի բան չէ պատահել։  
Այսուհետեւ օրէնք լինի,  
Որ դէմքներդ միշտ ծածկէք,  
Երբ որ այգպէս տղամարդկանց  
Դէմը ելնել գուք կուզէք։

Ասաց, ծածկից պատրուակով \*)  
 Հայկանդուխտի դէմք սիրուն,  
 Որ հիասքանչ գեղեցկութեամբ  
 Դիւթում, զբաւում ամենուն:  
 — Բարի Հայիկ \*\*) այստեղ եկանք  
 Քեղնից հրաման խնդրելու,  
 Որ թոյլ տայիր սպառագէն  
 Որդւոցդ շարքն մտնելու,  
 Զէնք ու զրահով զինաւորաած  
 Թշնամու զէմ կուտելու.  
 Կամ մեր արիւնն եղբայրներիս  
 Աղնիւ արեանն խառնելու.  
 Կամ յաղթական պսակ հիւսել,  
 Դնել այդ քո վեհ զլիսին,  
 Երդ ու պարով, ուրախ, դուարթ  
 Կայտուել յաւէտ ցնծազին:

\*) Պատրուակ նշանակում է քող, ծածկոյթ՝  
 որով ծածկում են երեսները: Յովլբայ գրքի  
 38 գլ. 31 համարում գրուած է «պատրուակ  
 Հայկին»: Հայկ անունով, մի պայծառ հա-  
 մաստեղութիւն կայ, որ տարուայ եղանակ-  
 ներում մերթ ծածկում և մնրթ երեսում է:

\*\*) Հայկ—հայրիկ բառից կրճատուած  
 Հայրիկ—Հայիկ—Հայկ:

Սակայն արդէն հրամայեցիր  
 Դէմքս ծածկած յիտ դառնալ.  
 Արդ՝ կազաշեմ իրաւունք տուր  
 Ներբովտ լեառը բարձրանալ.  
 Գէթ բարձունքից դիտենք մերոնց  
 Արիութեան բաջութիւն  
 Ու հոռուից խրախուսենք—  
 Ներշնչենք ոյժ, զօրութիւն:  
 Ոչ, մենք որպէս յաւերժահարսն—  
 Կոյս ոգիներ երկնային,  
 Սիրելեաց շնչով սնուած,  
 Պիտ սաւառնենք նրանց գլխին...  
 Մի երկմտիր, մեղ ոչ ոք չի  
 Համարձակիլ մերձենալ.  
 Վերից շատ քար կը գլորնք  
 Պալովը ողջ չի մնալ:  
 Արին կազմոս տարաւ նրանց  
 Մինչեւ սարի կատարը,  
 Ու այնտեղից լուրջ սիտում էր  
 Հանդիպակաց լեռները.  
 Ոստոստալով շուտ վար իջաւ  
 Ուղիղ բանակն շտապեց,  
 Խնչպէս լրտես համբաւարեր  
 Խըռոխտ ձայնը բարձրացրեց.

— Ս.ըդ՝ իմացիր զիւցաղն պապ,  
Ահա Բէլլ գալիս է,  
Հսկաների ու քաշերի  
Մեծ բաղմութիւն էլ հետն է:  
Դէ, շտապիր, ճակատ կազմիր,  
Ինչ անելու ես, արտ,  
Որ անվեհեր գուապաը մտնենիք  
Մարտնչելով աշկարայ:  
Հաստաբաղուկ նահապետը  
Հորդան տւեց իւր զօրքին,  
Երեք մասի բաժանելով,  
Առաջ խաղաց մոլեզին.  
Բէլլ վստահ իր բաղմաթիւ  
Զրահաւորների վրայ,  
Ճտապում էր սարեց դէպ ցածը  
Ընկնել շիտակ Հայկի վրայ:  
Նա իջնում էր ինչպէս հեղեղ,  
Կարկտախառն անձընով,  
Գիլ ու զլոր յորդ սահում էր  
Ահեղակոչ շառաջով:  
Մերթ կազմում էր յանդնդահոս  
Ահռելի զրվէժներ  
Եւ մերթ բանդում, քշում տանում  
Թէ բար, թէ թումբ ու սէզեր.

1001

Եւ կամ ինչպէս մթին ու ամպ  
Մըրիկներից յուղուելով,  
Քալիս է որ ծածկէ երկինք  
Դւր թխպագին ամպրոպավ։  
Այդպէս յանդուզն յարձակումով  
Ճահատակում էր առաջ,  
Միծ նիզակը ուժով ճոճում  
Հարուածելու աջ ձեռքով,  
Ու վահանը խաղացնում  
Պաշտպանուելու ձախ ձեռքով։  
Հայկ իւր աղեղը պինդ լարած,  
Խոկ կապարճը ուսն առած,  
Սլացաւ ինչպէս երկնային շանթ  
Արդարութեամբ բորբոքուած։  
Նրա հետն էին երկու որդին,  
Գոռ Մանաւազն ու Խոռը,  
Որ թիկնապահ էին իրենց  
Դիւցազնական վեհ հօրը։  
Ա. զ կողմիցն էլ Արմենակը,  
Ա.ոխւծի այդ կորիւնը,  
Մոնչելով յարձակեցաւ,  
Ցոյց տալու իւր շնորհը։  
Խոկ ձախ կողմից արշաւում էր  
Արին Կաղմոս քաջաբար,



Որպէս անխոնջ մի հունձ անող  
Հուզէր հնձել հմտաբար  
Ախոյնանի անթիւ բանակ  
Ինչպէս հասած գարու արտ,  
Որ աննման Հայկանդուխտին  
Վնաս շըտար ոչ մի մարդ.  
Ծորելով ու ծոր թափելով  
Անցաւ Բէլի զօրքերից,  
Ճատ դիակներ իրար վրայ  
Թափուած թողեց ետեից:  
Դիւցազների այդ կոփւը  
Սոսկալի ու ահեղ էր—  
Հսկաների ոտքերի տակ  
Երկիրն հիմքից դղբում էր,  
Վահանների բաղխումի ձայն,  
Ու թրերի շոնչին  
Լսում էին ամեն կողմից,  
Զըկար խազաղ մի անկիւն.  
Թոշում էին սուր սլաքներ,  
Ու ճարճատում նիզակներ.  
Որ արձականք էին գտնում  
Լեռներում ու ձորերում.  
Եւ վիթխարի մարտնչողներն  
Քնինում էին անկանգնում.

Քանի գնում խիզախ, յանդուգի  
Զարհուրելի են կուում.  
Քաջը բաջին պատահելով,  
Ոչ մի կողմլ չի յաղթում:  
Խիստ զայրացած դառող Բէլը  
Պրճտում էր ատամներ.  
Կատազութեան ամօթանքից  
2ը գիտէր թէ ինչ անէր.  
Ու իր գլուխը կորցրած,  
Այս կողմ, այն կողմն էր ընկել,  
Որ մի հնարքով փախչէր պրծնէր,  
Ու ոսոխի ձեռք շընկնէր.  
Եւ սկսեց փախչել դէպ յետ,  
Ճուտ այն սարը բարձրանալ,  
Որտից իջաւ, բայց ամաչեց  
Թշնամոն թիկունք ցոյց տալ.  
Սարն էր ելնում վերջոտնելով,  
Գէմքը դարձրած քաջ Հայկին,  
Որ աներկիւդ վրայ վազեց,  
Աղեղի լարն պինդ քաշեց.  
Երկթևեան նետն թոցրեց  
Ուժգին կերպով ու զարկեց.  
Բէլի կրծքի պղնձեայ հասոտ  
Տախտակն իսկոյն ծակուեցաւ,

Ու սլաքը շեշտ ճեղքելով  
Թիկոնքիցը դուրս ընկաւ։  
Ամբարտաւանն արժանացաւ  
Իրեն վայել պատիժի—  
Դիաթաւալ կործանուեցաւ  
Մուէ բլուրն վիթխարի.  
Նորա զօլրը այս որ տեսաւ,  
Ամենն իրեն դէմ փախաւ.  
Դիւցաղն Հայկ որպէս յաղթող,  
Գերի, աւար վերցրաւ.  
Կոռուի տեղը կոմող կանգնեց,  
Հայք դաստակերտ անուանեց.  
Որ հայ ազգը իւր բազկի ուժ  
Քաջութիւն հոն ցոյց տևեց,  
Խոկ այն տեղը, որտեղ ընկաւ  
Բէլը իրեն քաջերով,  
Գերեզմաններ անուանուեցան։  
Հայկ խոհական խորհրդով  
Նրա մարմինն զմբսեց,  
Առաւ տարաւ թաղելու  
Ներրովտ սարի կատարը,  
Իւր թոռներին ցոյց տալու  
Թէ մեծամիտ չար գոռողի  
Վերջն ողբալի կըլինի.

Նա իշի պէս կը սատկի,  
Ճան պէս էլ բարշ կը տրուի։  
\* \* \*  
Ֆալիկներից հիւսած պսակ  
Բոնել էին ձեռքերին  
Հայկանդուխտն ու ընկերը,  
Ու դէմ եկան քաջերին.  
Ուրախութեան աղալակներն  
Մինչն երկինք բարձրացնում,  
Երգ ու պարով ու բամբիոռով  
Ցնծում էին ու հրճում.  
Տօնում էին յաղթական տօն—  
Նոր օր պատ հայութեան.  
Նոր կեանք, նոր լոյս պիտի տեսնէր  
Բոլոր Տունն Թորգոմնան։  
Իրենց կլոր պարը բոնած  
Թկերը վեր վերցըրած,  
Թոշում էին արտդ արագ  
Մէկ ձախ կողմը՝ երկու աջ.  
Երգում էին բաղցրահնչիւն  
Դիւցաղնական շատ երգեր,  
Երգն էր գովեստ հերոսներին,  
Որ արել են մեծ դործեր.  
«Փառքի պսակ է, արժանի»

Քաջազանգուր Հայիկին,  
Որդիական խոնարհ համբոյլ  
Նորա զօրեղ սուրբ աջին:  
Անպարտելի Սրմնակից  
Հալածուեցաւ թշնամին.  
Սրին Կադմոս վազում առաջ,  
Կոտորում գէմ կանգնողին»:  
Անվերջ զովում են պարողներն  
Օրուայ դիւցազն հերոսին,  
Եւ նորա թե-թիկոնքներին,  
Պսակ դնում են զլխին:  
Ուրախութիւնն անսահման էր  
Ու ցնծութիւնն սրտագին:  
Մեր այս դաժան կեանին անցաւոք,  
Որ նման է դժոխըի,  
Նոցա համար մի դրախտ էր  
Երջանկաւէտ բարելի,  
Անկեղծ սիրոյ ջինջ ցողերով  
Զուարթազին ողողած,  
Որտեղ ապրում են անվրդով  
Աշխատանքի տէր դառած.  
Բոնակալը դարշելի,  
Որ բիրտ ուժով կուզէր լինել  
Միրելի ու պաշտելի:

Նորա այժմ անշունչ դիակն  
Ոտքերի տակն է փռուած:  
Զըկար երկիւղ ու բռնութիւն,  
Զուր հալածանք ու զրկանք,  
Զըկար տխմար գոռող իշխան  
Որ խորտակէր հայի կեանք,  
Հետիաբար տեղիք չըկար  
Ուտելութեան, զրկանքի:  
Եւ մատնութեան ու քսութեան—  
Ասարգ վարչութեան հիմքի,  
Որ իր ստոր, խայթող ու չար  
Եւ կասկածոտ վարմունքից  
Միշտ վախեցած գալարւում է  
Որպէս օձր իւր ճոյնից:  
Ազատութիւն էին հնշում  
Բոլոր մարդիկ միաբան,  
Ազատութեան մըմունջ լսում  
Ճրթունքներից մանկազն:  
Ազատութեան ձայն տարածւում  
Թէ սար, թէ ձոր, թէ անտառ,  
Ազատ սիրոյ ջերմ շնչումով  
Հեւում են կուրծք արևառ:  
Այս վեհազոյն բարեաց պտուղ—  
Խաղաղութիւն ցանկալի

Տիրեց համայն Հայկի երկրին,  
Որ եղաւ նախանձելի:  
Սնապատներն ապատ դարձան,  
Ճէներ, դիւզեր շատացան,  
Վաճառաշահ բաղաքների  
Ս. թհստները բազմացան:  
Հիացուցիչ հանդէմների  
Կրթիչ ազգեցութիւնը  
Սւանդվում էր որդոց որդի  
Ինչպէս այժմ ուսումը:

\* \* \*  
Անձնեայ դիւցազն՝ այդպէս իշխեց  
Ութուուն տարի շարունակ.  
Նորա տեղը մահից յետոյ  
Բոնեց որդին Ս. թմնակ,  
Թէն անցել է չորս հազար  
Տարուց աւել այն օրից,  
Սակայն մեր ազգն այժմ հայ անուն  
Կրում վերան Մհծ Հայկից:

Ե Ր Գ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Իշխանաւորն թէ չը լինի  
Առաքինի, զարգացած,  
Բարի գործեր կատարելու

Հոգով, որտով նուիրուած՝  
Բնաւ երեք նա չի կարող  
Ոչ երջանիկ օր տեսնել,  
Ոչ էլ իրեն երկը համար  
Մի օգտակար բան անել.  
Որովհետև առաքինի  
Կեանքն է միայն, որ կապում  
Ծառաներին տիրոջը հետ՝  
Վստահութիւնն ներշնչում.  
Իրաւունքի ու միութեան  
Միրոյ այդ ջինջ աղբիւրում  
Մկրտուելով անմահ բազերն՝  
Հայրենիքին են ձօնւում:

\* \* \*  
Հայոց Հարմա նահապետի  
Թոյլ վարչութեան օրերում,  
Դիւցազն Հայկի առաքինի  
Գործերն էին մոռացւում:  
Ամեն բանում գերեշխողն էր  
Մին հաճոյքն անձնական.  
Չըկար մէկը, որ պահպանէր  
Գէթ սահմաններ Հայկեան Տան,  
Մարաց նիւքար հպարտ իշխանն  
Զօրքով մտել Հայաստան,

Ու բռնոթեամբ հարկ էր ուզում.  
Դատապարտում էր մահուան,  
Ով չէր խօսում Մարաց լեզով—  
Սիրում բարբառ մայրական։

\* \*

Հարմայի տեղ Արամ որդին  
Ցաշորդելով՝ ժողովեց  
Երկրի բոլոր տանուտէրներն  
Ու գահական ճառ խօսեց.  
— Ամայի նման ահեղ գոշին,  
Այս ահապին ճիշ, ողբեր,  
Ուր տեղից են գալիս. ինչո՞ւ  
Չեն լսում ձեր ականջներ.  
Բայց ես համայն էութեամբս  
Լսում բոլոր լաց ու կոծ,  
Որոնք վերաս խիստ ազգելով՝  
Ինձ դարձնում են թիւնոտ օձ.  
Բորբոքւում է իմ արիւնս,  
Վրդովւում է սիրտս, հոգիս,  
Երբ այդպիսի տխուր լուըեր  
Համնում են իմ ականջիս։  
Ո՞վ է արդեօք այն յանկուգն,  
Որ այսքան վիշտ պատճառում  
Իմ սիրելի եղբայրներիս

Անզթաբար է տանջում.  
Ժողովրդի զլխին զարկում,  
Չեռիցն առնում անհամար  
Արիւն քրտինրի վաստակը  
Ու թողնում է խեղճ, շուար.  
— Նիւքարն է, տէր, Հայր նահապետ,  
Քիւրդերի ոէկ իշխանը.  
Կուզէ իշխել մեր երկրին,  
Լինել նորա մեծ տէրը,  
Զայնեց ժողովն ի միասին,  
Որ լսում էր այս ճառին։  
— Ի՞նչ արժան է մեզ ողջ մնալ  
Եւ տղամարդ անուանուիլ,  
Երբ հարս, աղջիկ առևանդուած  
Ու լկուած պիտ տեսնել։  
Մըթէ ամօթ չէ, որ զլուխս  
Ծածկեմ Հայկի ճոխ խոյրով,  
Որը արդէն դարդարուած է  
Խոյի խոշոր եղջիւրով,  
Եւ իժ օձի շորացրած  
Թիւնալից խրտուիլակով,  
Քանի որ մեր եղբայրները  
Հալածւում են շար ձեռքով։  
Հըկան արդեօք Այրարատում,

Գնալ պատել Մարաց երկիր,  
 Ու հարուածել խիստ սաստիկ,  
 Վրէժ լուծել ու կոտորել  
 Բոլոր մարդկանցն ռազմիկ:  
 Դիւցազն Արամ յիսուն հազար  
 Կարիճներ շուրջ ժողոված՝  
 Գնաց դէպի Մարաց աշխարհ։  
 Դեռ արել չը ծագած,  
 Յանկարծակի վրայ հասաւ,  
 Զորս կողմիցն էլ պաշարեց  
 Զար թշնամու ահեղ բանակ,  
 Զարկեց, փշրեց խորտակեց,  
 Նիւքսրին էլ գերի բռնեց,  
 Բերեց մինչև Արմաւիր։  
 — Լսիր, ասաց, ով անմիտ Քիւրդ.  
 Խնչնւ մտար մեր երկիր.  
 Միթէ Զարասպ սարի ծաղկանց  
 Հոտը քթիդ հերիք չէր.  
 Եւ կամ քեզ ինչ օգուտ էր որ,  
 Հայը խօսէր քիւրդերէն.  
 Զէ որ մենք էլ սիրում ենք մեր  
 Մօր բարբառը հայերէն։  
 Ուրեմն դու բռնակալ ես,  
 Մեռիր չարաշար մահով.

Սիւնիքում, այլ տեղեզում  
 Պատիւ, ամօթ զիտեցողներ  
 Որ գան, վանենք թշնամուն,  
 Եթէ իբենց թոյլ երակում  
 Մեք մեծ պապի արիւնից  
 Կըում են քիչ հիւթ իբրև ձնունդ  
 Դիւցազնական սերնդից։  
 Սնկախութիւն կամ մահն է իմ  
 Մտքիս միակ նստատակ։  
 Որի համար արդ պարզում եմ  
 Սզգիս դրօշ փառունակ։  
 Եւ եա պիտի միշտ փողփոխի  
 Սզատ Մասեաց կատարին,  
 Քանի ոը ես օդ եմ շնչում,  
 Զեռս դնում իմ թրին։  
 Դէ, ուրեմն ով սիրում է  
 Ապրիլ ազատ անսասան,  
 Թող այս դրօշակն ընտրէ իրեն  
 Փրկութեան յոյս, ապաստան։  
 \* \* \*

Առոյգ տղայն ամեն կողմից  
 Խումբ խումբ եկան Արմաւիր.  
 Տէդ ու աղեղի մէջ խիստ վարժ  
 Կուզին որպէս արհաւիր,

Արմաւիրի աշտարակից,  
Ցըցի զարկած կը կախուիս,  
Որ երկնքի թռչուններից  
Հայի լեզուն սովորես:  
Իսկ ես կիշխեմ քո երկրին,  
Բայց ոչ քեզ պէս բռնութեամբ.  
Այլ ամենքին էլ հաւասար  
Ես կը նայեմ գթութեամբ:  
Մինչդեռ Արամն այս յաղթութեամբ,  
Խաղաղ, հանգիստ իշխում էր,  
Բարելացոց բարշամ իշխանն  
Սև նախանձով լվառում էր,  
Առաւ գօրքերն քառոսն հաղար  
Աղեղնաւոր, հետեակ,  
Հինգ հաղար էլ հեծելագորք,  
Որոնց գէնքն էր թուր, նիզակ,  
Դիմեց դէպի Հայոց աշխարհ  
Դեղել մեր քաջ Արամին,  
Եւ նորա տղնն ու տիրուհին  
Անել խոնարհ աղախին:  
Սակայն դիւցազն այս որ լսեց,  
Ժողվեց կտրիճ հայ տղայք.  
Անակնկալ վրայ հասաւ,  
Մինչ գիշերն էր դառնում այդ,

Զարդ ու փշուր, ու ցան ու ցիր  
Արաւ թշնամու բանակ,  
Ու Բարշամին էլ սպանեց,  
Կանգնեց գօրեղ յաղթանակ:  
\* \*  
Դիւցազն Արամ ելաւ գնաց  
Արկմտեան կողմերը  
Հասաւ մինչկ Կապադովկիա,  
Ուր այնտեղի իշխանը՝  
Մեծ Պայարիս անթիւ գօրքով  
Կոիւ տուեց համարձակ.  
Հայ բանակը, որ կազմում էր  
Քառոսն հազար հետեակ,  
Երկու հազար էլ ձիաւոր,  
Զարդ ու փշուր փախցրաւ,  
Միջերկրական ծովին հասուց.  
Պայարիս հոն պահուեցաւ:

\* \*  
Այնտեղ Արամն իր փոխանորդ  
Կարգեց խելօք Մաժակին,  
Տասն հազար էլ զինւոր տուեց  
Ու պատուիրեց բոլորին,  
Որ միշտ խօսեն Հայոց լեզուով,  
Ու լնքն եկաւ Հայաստան:

Ճատ քաջութիւն արաւ ու շատ  
Ընդարձակեց հայ սահման։  
Երևելի ու անուանի  
Եղաւ ուրիշ ազգերում,  
Որոնք նորա անունովն էլ  
Հային Արմէն են կոչում։  
Յիսուն և ութ տարի իշխեց  
Ահեղ դիւցազն անսասան։  
Ազգին տիրեց նորա որդին  
Գեղեցիկ ու վեհ Արան։



Ե Ր Գ Ե Ր Բ Ո Ւ Դ

Դուք՝ որ ձգիք երկար լարեր  
Մասիսից մինչ Արագած,  
Եւ բազմազեայ ու քաղցրակուը  
Մի մեծ քնար յօրինած՝  
Գովում էիր, Հայոց Մուսաք,  
Սրանչելի դիւցազնին  
Դէ, ձեր շնչով բորբոքեցիր  
Իմ մէջ սէր, հուր երկնակին,  
Որ լաւ երգեմ ես մեր բոլոր  
Արքաներից հզօրին։  
Ու ամենից խոհեմ և բաջ  
Երուանդեան մեծ Տիգրանին,  
Որ սիրում էր հաւսար կերպով  
Իշխանին ու գեղջուկին։  
Ամեն բանում արդառադատ,  
Եւ ուղիղ էր կըշըռող,  
Ամեն մարդու վարը ու բարը  
Հստ արժանոյն գնահատող.  
Ոչ լաւերին էր նախանձում,  
Ոչ նուաստին անպատճում,  
Այլ հանդերձի քղանցքները

Տարածել էր աշխատում  
Առասարակ նրանց վրայ,  
Որոնք պէտք էին զգում:  
Ի՞նչն իհձ համար սիրելի է  
Քան երկարել այս դրօւմ  
Սրա զովքն ու պատմութիւնը,  
Որ սրտիս է հաճելի:  
Կայ արդեօք մի ճշմարիտ  
Որին չլինի ցանկալի  
Այս դիւցազնի արիութեան,  
Խոհմութեան յիշատակ,  
Որ ոչ միայն զուարճութիւն,  
Այլ կտայ մեղ օրինակ  
Նոր, թարմ սերունդ պատրաստելու,  
Որ բարձրանայ մեր հայ ազգ:  
Մեզ, հարկերով ճնշուածներիս  
Արաւ առնող ծանր հարկ,  
Ու լուծի տակ ապրողներիս  
Գարձրեց շատին լուծ դնող.  
Բազմացրեց ոսկի, արծաթ,  
Անգին քարեր զարդ լինող,  
Ջատացրեց նոր տարապի  
Գոյն գոյն հանդերձ ու բանուածք.  
Պճում էին առհասարակ

Տամարդիկն ու կանայք.  
Ու այզպիսով խիստ գեղեցիկ  
Երեսում էր տղեղը,  
Դիւցազնանում այն ժամանակ  
Գեղեցիկն ու չքնաղը:  
Հիտևակ զօրքն ձիաւորուեցաւ,  
Պարսաւորներն էլ դարձան,  
Քաջ նետաձիգ. շերտաւորներն  
Սրով ու տէզով զինուեցան,  
Խոկ մերկերը ծածկուեցան  
Վահանով ու երկաթով.  
Բաւական էր, որ այսքան ուժ  
Փողովէր մէկտեղ զէնքով,  
Այդ հանդէսի ահեղ տեսքից,  
Զէնքի վալից, շաշիւնից  
Թշնամիներն հալածուելով՝  
Փախշում էին սահմանից:  
Խաղաղութիւն ու շինութիւն  
Բերող էր նա ամեն տեղ,  
Խւզ ու մեղրով կերակրում էր  
Բոլոր մարդիկ ամեն տեղ:  
Եւ այսպիսի շատ գործերով  
Ծաղկեցրեց Հայաստան:  
Այս շէկ ու ծայրն գանգուր մազով

Փառապանծ տէրն ու արքան,  
 Որի երեսն էր գունաւոր,  
 Իսկ աշքերը անուշիկ.  
 Թիկոնրը հաստ, լիք տպղով,  
 Ոտքեր ունէր գեղեցիկ.  
 Ենքն էլ արդէն երիտասարդ,  
 Գեղեցիկ էր վիաւոր.  
 Կեանք էր վարում առաքինի,  
 Խնձոյքներում չափաւոր.  
 Կերակրի ու խմիչքի  
 Մէջ լինում էր միշտ պարկեցտ,  
 Բնաւ նրան մատչելի չէր  
 Ոչ մեղկութիւն, ոչ կեանք հեշտ:  
 Սրա մասին մեր հները  
 Բամբուխ վրայ երգելիս,  
 Ինչ զովք ու ինչ զրուատ, օրհներգ  
 Զը լինէին ձօն տալիս.—  
 Առում էին, որ մարմնական  
 Յանկութեան միշտ չափաւոր  
 Ու ողջախոն էր երեւում,  
 Թէս հզօր թաղաւոր:  
 Մեծիմաստ էր, ճարտարախօս,  
 Ամեն բանին պիտանի,  
 Մարգկութիւնն նրա մէջնաէր,

Կատարեալ ու կենդանի:  
 Արգարութեան կորովն է, որ  
 Կեանքն անում է երջանիիկ.  
 Լայն խորհուրդն ու հզօր ձեռքն են,  
 Որ տալիս են շատ բարիք:  
 \* \* \*  
 Պարոյր Հայկազն գլխին զրեց  
 Խահապետի խայրի տեղ,  
 Սըքայտկան գեղեցիկ լժագ,  
 Ու հաստատեց ամեն տեղ  
 Նոր նոր կարգեր շատ ճոխ ու պերճ  
 Միապետին արժանի.  
 Ու երիթրը բարզաւաճեց  
 Խորեներով պիտանի: <sup>1)</sup>  
 Այս առաջին լաղաւորի  
 Իններորդն էր Տիգրանիը,  
 Որի հայրն էր սակաւակեաց.  
 Այն առաջին երուանդը,  
 Որ իւր քայը տուեց Վարդգէս

1) Պարոյրի օրով Հայաստան եկան ասորոց Սեսեքերիմ թագաւորի որդիքը՝ Ադրամելիք ու Սանտասար, որոնցից սերուեցան սասունցիք, Արծրունիք ու Գնունիք:

Գեղատեսիլ իշխանին,  
Քասաղի մօտ լվայելչանիստ  
Վարդպէս աւան շինողին։<sup>1)</sup>  
Թագաւորները զարհուրած  
Ընծաներով են դիմում  
Ու իրենց հետ դաշնակցելու  
Նրանից պայման են խնդրում  
Եւ դիւցազնին ահն ու սարսափն։  
Ինչպէս մահուան արհաւիրք,  
Պատել էին մեծ պետերին,  
Որոնք դողալով զալիք  
Պատիժից ու պատուհասից,  
Կորցրել էին անուշ րուն  
Դրանցից մէկն էր Աժդահակը—  
Մարաց արքան քաջ արթուն։  
Սա տեսնելով, որ մեծ կիւրուտ  
Պարսից հոօր թագաւոր  
Մտերմական դաշն է կապել  
Տիզրանի հետ ահաւոր,  
Ընկաւ տանջող մտքերի մէջ,  
Փախաւ քունը աշքերից։

<sup>1)</sup> Վարդուէսի աւանը յետոյ կոչւեց քառարադաշտ, նոր բաղաք, Վաղարշապատ։

Մտածում էր թէ ինչ կերպով  
Սցատուի նա վտանգից,  
Ինչ հնարքով կարողանայ  
Քանզել սիրոյ այն կապը  
Որ կապել էր պարսիկի հետ  
Բազմաբիւր Հայկազնը։  
Եյդ մտքերով խիստ շփոթուած,  
Մարգարէական յայտնութեամբ,  
Նա տեսնում է գլխին գալիքն  
Երազական մեկնութեամբ։  
Տեսաւ երադ, ահեղ տեսիլ,  
Քնիցն իսկոյն վեր թռաւ։  
Դեռ գիշեր էր. սովորական  
Կարգ խանգարել սկսաւ,  
Ու խորհրդի ժամից առաջ  
Խորհրդակիցներն հաւարեց  
Տխուր, տրտում գետնին նայած՝  
Մոնշելով ախ քաշեց.  
Ու իւր սրախ մէջ ծածկուած  
Կասկած, խորհուրդ պարզ ասեց։  
Ամբողջ մարմնուն սարսուռ անցաւ  
Դէմքը իսպառ զունատուած  
Եւ ահիցն ու ամօթիցը  
Ոսկորներն էր բստմած։

— իմ սիրելի իշխաններս,  
Նուազած էր նա խօսում.  
Ես իբրև թէ էի օտար,  
Մի անձանօթ երկրում.  
Կանգնել էի մի սարի մօտ,  
Որ շատ բարձր էր երկրից.  
Ու գագաթը ծածկուած էր  
Չիւնի անվերջ սառուցից:  
Կարծես թէ ինձ ասում էին,  
Որ եմ Հայոց երկրում:  
Նայում էի սարի վրայ,  
Որի ժայրին երեսում  
Բարձրահասակ մի կին նստած՝  
Դեղեցիկ աչք ու ունքով,  
Կարմիր այտերն են ծածկուած  
Երկնագոյն կապոյտ քողով.  
Յաւ էր քաշում տղարերի,  
Նայում էի հիացած.  
Կինը ծնեց երեք դիւցակն,  
Ամեն բանով զարդացած.  
Առաջինը առիւծ հեծած  
Դէսլ արեմուտք մէկ թռաւ,  
Երկը ըրըզը ընծի վերայ  
Դէպի հիւսիս շիտկեցաւ.

Իսկ երբորդը մի ահազին  
Զար վիշապի սանձելով,  
Յարձակուեցաւ իմ տէրութեան  
Վրայ ուժգին խրոխտալով:  
Ինձ թւում էր թէ այդ ժամին  
Կանգնած էի տանիքին,  
Դիտում սիրուն շատրուաններ,  
Վերին երես սենեակին,  
Որտեղ էին մեր աստուածներ  
Հրաշալի պատկերով.  
Ես էլ ձեզ հետ ի միասին  
Պատում զոհով, խնկերով:  
Երբ ես յանկարծ յետ նայեցի,  
Տեսայ վիշապին նոտող  
Դիւցաղն եկաւ ինձ մօտեցաւ  
Սրծոի նման ոուր թռչող.  
Կամենում էր աստուածներիս  
Զարդել, վշշել, կործանել,  
Իսկ ես իսկոյն առաջ անցայ  
Յարձակումը ընդունել:  
Սքանչելի դիւցագնի հետ  
Կուռում էի կատաղի,  
Նիզակներով ծակում էինր  
Նախ մէկ-մէկու մարմինը,

Առուակների պէս վազում էր  
Մեր վրայից արիւնը,  
Իմ պալատի հրաշակերտ  
Արեգնատես երեսը  
Թափած արնով ծով դարձրինք:  
Ես վայը ձղի նիղակը,  
Յետոյ առայ ուրիշ զէնքեր  
Ու շատ երկար կռուեցայ:  
Բայց ինչ օգուտ երկար կռուից,  
Որ չարաշար յաղթուեցայ:  
Սաստիկ վախից ես քրտնեցի,  
Քունս վախաւ աշքերից,  
Այնուհետեւ կարծում էի,  
Թէ ես չեմ այս աշխարհից:  
Արդ՝ այս տեսիլն ուրիշ բան չէ,  
Եթէ ոչ՝ մի գուշակում,  
Որ Հայկակեան Մեծն Տիգրան,  
Մեր վրան է յարձակում:  
Բայց ձեզանից նվ չի յուսալ  
Սստուածների օգնովթեամբ  
Մեղ վառակից լինել՝ խօսքով,  
Օգուտ բերել քաջութեամբ:  
Աժդահակը լսեց անշափ  
Օդտաւէտ, լաւ խորհուրդներ.

Խորհրդակից իշխաններից,  
Գովեց նոցա կարծիքներ:  
— Ըատ հանճարեղ ու իմաստուն  
Խօսքեր ձեզնից լսեցի.  
Դէն լսեցէր իմ կարծիքս էլ  
Գուցէ օգտաւէտ լինի.  
Թշնամու դէմ գօրեղ զէնքն է  
Դաւաճանել կեղծ սիրով  
Մեր այս զործը գլուխ չի գայ  
Ոչ գանձով ու նենդութեամբ,  
Թէ շը զործնը ինչպէս կամքն է  
Սստուածների օգնովթեամբ:  
Իմ խորհուրդս կը կատարուի,  
Թէ լաւ լարենք որոգայի՛,  
Որի նիւթը լինելու է  
Նորա քոյրը անարատ,  
Բոլոր կանանցից խոհեմը  
Տիգրանուհին զեղեցիկ.  
Որովհետև մի այդպիսի  
Ազգականը ազգեցիկ,  
Կարող է միշտ գաւաճանել,  
Մեր բաղձանքը կատարել.  
Կամ կարող ենք խօստումներով  
Նորա մարդկանց գրաւել,

Մահի դեղով և կտմ սըով  
Ծածուկ կերպով սպանել:  
Այդ վճիռը ընդունուեցաւ  
Եշխանների խորհրդով,  
Ու Աժդահակի Տիգրանի մօտ  
Պատգամ զըկեց այս թղթով:  
Մարաց արքայ Աժդահակից  
Ողջոյն սիրոյ ցնծութեան  
Հզօր արքայ վիհ դիւցապնին,  
Տիգրան Մէծին Հայկեան տան,  
Քո սիրելի եղբայրուվինով  
Դիտէ, որ այս աշխարհում  
Աստուածներից ոչինչ այնքան  
Քնտիր բան չէ պարզեւմ  
Քան սիրելի բարեկամաց  
Թիւլ յաւէտ բազմացնել,  
Նա մանաւանդ բեզ պէս հզօր  
Ու իմաստուն մարդ գտնել:  
Այնուհետև ոչ որ դրսից  
Համարձակուել չի կարող  
Խռովութիւն յարուցանել,  
Գիտնալով որ կայ պատժող:  
Իսկ ներսից էլ այդ չարութիւնն  
Զնդունելով ոչ որից,

Ճուտով ինքնին հալածում է  
Սուանց ջանքի մեր կողմէց:  
Արդ՝ տեսնելով օդտակար շահ  
Պիտի ծագի այդ բանից  
Մտածեցի ջերմ, հաստատուն  
Սիրով կապուել միմիանցից  
Որ երկուսն էլ ամբանալով  
Սմին կողմից առանով,  
Ողջ ու անշարժ պահենք ընդ միշտ  
Մեր տէրութիւնն անվրդով:  
Բայց այս բանը զլուս կդայ  
Երբ զու տաս ինձ կնութեան  
Հայաստանի օրիորդին,  
Տիգրանուհին երուանդեան,  
Թէ որ կուպես քո բրոշը  
Բարիք անել զովելի,  
Օրովհետև նա կլինի  
Իմ թագուհեաց թագուհի  
\* \* \*  
— Քոյը իմ, անուշ Տիգրանուհի,  
Մարաց արքան Աժտահակ  
Մարդ է զըկել շատ գանձերով  
Զեռդ է խնդրում: Համարձակ  
Ասա, տեսնեմ, կո՞ւզես լինի

Տիկնանց տիկին քիւրդերին:  
— Սիրով կապըեմ հայ հովուի հետ  
Քան քիւրդերի արքային,  
Բայց թէ պէտք է ազգիս փառքին  
Կեանքս զոհել, պատրաստ եմ  
Ոչ թէ մարին կին լինելու,  
Գերի անգամ կլինեմ:  
— Այդ իմ խորին համոզումն էր,  
Որ իմ գեղեցիկ բոյրիկ,  
Միշտ անձնուէր ձգտում ունի  
Դէպի իրեն հայրենիք:  
Քեզ հետ օժիտ ես կուղարկեմ  
Ճատ աղախին ու գանձեր,  
Ու շատ անգամ քնզ կայցելենք  
Թէ ես և թէ մեր քաջեր:  
«Այս, երանի հրամայէր  
Իմ թագակիր տէր եղբայր,  
Զինաւորուած յարձակւէի  
Մպանելու ես այն Մար...»  
Հայրենիքիս վեհ, սուրբ սիրով  
Սիրտս է համակ պարարւած.  
Ինչպէս այժմ կարողանամ  
Նուիրական ինձ զարձած  
Քաղցը չայտատան թողնել դնալ

Օտար աշխարհ կին դառնալ,  
Ուր ատելի է ամեն բան.  
Դժգոյն անհոտ է վարդն ալ.  
Բոլոր կեանքս պիտի անցնի  
Ինչպէս երազ տանջալից,  
Կամ բոնուած մղձաւանջով՝  
Զուրկ պարզ, զուարթ օրերից,  
Ու տոզորուած խիստ զզուանքից  
Եւ նողկալի գարշութեամբ,  
Որ պիտ տածեմ զէպ այն տխմարն  
Հոգոյս բոլոր զօրութեամբ:  
Անշափ ծանր է այդպէս ապրել.  
Լաւ է մահ քան ողջ մնալ,  
Գիշեր, ցերեկ անվերջ տանջուել  
Փրկութեան յոյս չունենալ»:  
Հայոց Մեծաց օրիորդը  
Ընկզմեցաւ այս տանջող,  
Տիրուր ու դառն մտքերի մէջ,  
Սակայն կամքով էր կարող:  
— Ինչի՞ տրտմար, սիրուն քուրիկ,  
Սրիացիը ու սիրտ առ,  
Ես քեզ բնաւ չեմ մոռանում.  
Իմ զօրքերըս զինավառ  
Միշտ կըհասնեն քեզ օգնութեան

Եթէ մի քիչ նեղն ընկես.  
Ողջ Մարաստան կը կործանեմ,  
Դու էլ փառքով պիտ ապրես:  
— Տիրութիւնս հետեանք է  
Տածած սիրոյ դէպի քեզ  
Ու իմ քաղցը հայրենիրիս,  
Որից հեռու սիրակէզ  
Պիտի ապրեմ օտար երկրում  
Խորթ համարուած իմ հոգոյն.  
Ուր չեմ կարող շնչել ապատ  
Պստկ հիւոել վարդապոյն  
Ու զարդարել հայ կտրիճի  
Խոհուն զլխի զանգուիներ.  
Եւ կտմ որպէս գթութեան քոյր  
Կապել նորա մեծ վէրքեր:  
Էլ ես մրտեղ պիտի տեսնեմ  
Օը ըստ օրէ զարդացող  
Մեր շէն գիւղեր ու քաղարներ,  
Ծաղկներով ծիծազող  
Դաշտ ու հովիտ և սար ու ձոր,  
Ուր կուսութիւնս է անցել,  
Զքնազագեղ լնկերտանց հետ  
Ազատ երգել ու պարել:  
Սոխակների հետ դաշլայլ

Ու գառների հետ կայտուել...  
Որ մէկն յիշեմ ազատ կեանքիս  
Բարիքներից սիրանուշ,  
Որ վալնլած քուն եմ մտել,  
Տեսել երազ բաղցը անուշ...  
Գիտակցում եմ, որ մերժումով,  
Առիթ կըտամ մեծ կոռի  
Ուր խեղճ մայրը պիտի ողբայ  
Մահն իրեն զաւակի.  
Ու այս զբախտ հայրենիքս  
Պիտի զառնայ նողկալի  
Դժոխային մի տեսարսն,  
Ոհ, այդ ցան է սոսկալի,  
Որ միմիայն իմ պատճառով  
Մարդիկ պիտի կոտրաւին,  
Ու բարելի զաւառները  
Ունեցածից զըկուեն:  
Ինձ ուրեմն վիճակված է  
Հնազանդել իմ բաղդին,  
Ու յաղթելով զգացմունքիս  
Լինել տիկին մեծ բիւրդին:  
— Քո խօսքերը բորբոքում են  
Կայծերն հանգած վրէժիս:  
— Ոչ, ոչ, եղբայր, աղաչում եմ,

Թող որ զոհուեմ իմ ազգիս։  
Հրաման տուր, թող պատրաստեն  
Իմ հարսնութեան կարաւան։  
Ճուտով, շուտով, այսօր և եթ  
Ես կրգնամ Մարաստան,  
Բայց չըմոռանաս, իմ հարազատ,  
Որ քեզ կըյիշեմ յաւիտեան։  
Հայաստանում բուսած, ծաղկած  
ծաղիկների թագուհին,  
Խիստ գերազանց բարձր դիրքով  
Բազմել Մարաց ճոխ գահին,  
Ու բազմիմաստ հրամաններ  
Արձակում էր վեհութեամբ.  
Ալլ իսկոյն կատարում էր  
Աժդահակից կեղծութեամբ։  
Խորախորհուրդ տիկնանց տիկին—  
Միահեծան տիրուհին  
Ինչնը ասես որ չէր գործում  
Յօգուտ թշուառ երկրին.  
Անձնատուր էր ժողովրդի  
Բարօրտւթեան, զարգացման.  
Յանկանում էր նոր հայրենեաց  
Զուարթ օրեր ցնծութեան։  
Ստկայն սիրտը սեղմւում էր

Նախազեկոյց բնազդով.  
Նա կարծում էր որ զբաւեց  
Տիգրանուհու սիրտն անրիծ,  
Որ էլ պիտի չը բարախէ  
Եղբօր սիրովն անտղեղծ։  
— Իմ նազելի, քաղցրիկ հոգեակ,  
Հաստատ գիտեմ, դու գոհ ես  
Մեր երկրի մեծ ու փորրից,  
Ինձ էլ սրտով սիրում ես,  
Բայց կայ լաւ բան այս աշխարհում  
Որ չար նախանձ չը շարժէ։  
Գիտես րո հարս սև Զարուհին  
Նախանձելով ատում է  
Քեզ, որ եղար Արիներին  
Միլանածին մեծ տիկին.  
Գրգոռում է և ամուսնուն,  
Քո եղբօրդ Տիգրանին,  
Որ գայ տիրէ մեր երկրին,  
Ու Զարուհին էլ դանայ  
Արիներին վեհ թագուհի,  
Քո այս գահին տիրանայ։  
Ու այդ բանը չի կատարուի  
Բանի, որ ես շնչում եմ։  
Այս, իմ հրեշտակ, դու ինձ լսիր,

Ահա թէ ես ինչ կասեմ:  
 Սըի, կանչենք քո եղբօրըդ,  
 Գիտեմ, կըգայ աներկմիտ,  
 Նրան մի կերպ վերջացնենք,  
 Որ մենք ապրենք հնշտ, հանգիստ։  
 Իսկ թէ որ չէ, քո բաժինն է  
 Խայտառակ կեանքն և կամ մահ։  
 Իսկ խորագէտ գեղեցկուհին  
 Երբ իմացաւ իր մարդի  
 Անարդ խորհուրդն, որ յատուկ է  
 Դաւաճանին տմարդի,  
 Պատասխան էր տալիս նրան  
 Ճատ սիրալիք խօսքերով։  
 —«Ես քեզ համար աշխարհիս մէջ  
 Պարտական եմ իմ կեանքով,  
 Քանի որ դու ինձ լսում ես,  
 Միըում աչքիդ լսին պէս,  
 Ինչու համար ես չը պիտի  
 Անեմ եղբօրս ողջակէզ,  
 Որ միմիայն անուշ սէրդ  
 Կուշտ վայելեմ ցնծութեամբ,  
 Ու հրամայեմ Արիներին  
 Ալրիւ միշտ իմ հաճութեամբ։  
 Մինչ երեսանց կեզծ ու պատիր

Սէը ցոյց կըտար խաբելով,  
 Սակայն սիրտը բորբոքում էր  
 Ատելութեան կրակով.  
 Իր մտերիմ մարդկանց ձեռքով  
 Այս գաղշելի նենգութիւն  
 Ծածուկ յայտնեց իր եղբօրը։  
 Սրդ՝ տարած էր յաղթութիւն։

\* \*

— «Անզուզական իմ բարեկամ,  
 Խնդրում եմ, որ շուտով գաս  
 Մեր տէրութեան սահմանավուխ,  
 Ուր պէտք է, որ կարծիք տաս  
 Ճատ կարեոր գործի համար,  
 Որ ոչ գըշով, ոչ մարդով,  
 Քեզ յայտնելու շըկայ մի ճար,  
 Միայն պէտք է մենք խօսքով  
 Իրարու հետ տանք ու առնենք,  
 Ու մեր սրտի գաղտնի գործ  
 Քննենք ու կարգադրենք,  
 Որ մենք մնանք միշտ անփորձ։  
 Այսպէս զրեց Աժդահակը  
 Դիւցազն հայ ալրային։  
 Այլ պատասխան խիստ կտրուկ էր,

— «Կոիւ կըդամ քո գլխին»:  
\* \* \*

Հայաստանի զօրք ու զինւոր  
Բոլոր ոտքի կանգնեցան,  
Կապատովկիոյ գրառւթիւնից  
Հուժկու զնդեր դաւրս եկան,  
Ծնտիր, ընտիր շատ մարտիկներ  
Վիր ու Աղուան աշխարհից  
Եկան, ժողվան մեծ Հայաստան:  
Ներկուու բանակ կազմուեց,  
Հորդան տուեց դէպ Մարաստան,  
Որ ազատեն հայ գերուն  
Հանճարի տէր ու աննման  
Տիգրանուհի թագուհուն:  
Աժդահակը վտանգուած էր  
Քանի որ պէտք է կուէր  
Ահեղասատ Հայկազնի հետ  
Որ անշափ շատ զօրք ունէր:  
Ու կոփէր երկարում էր,  
Տեսց մինչեւ հինգ ամիս,  
Որովհետեւ արագ, առողջ  
Գործն էր հիւանդ մարդու տէսր  
Երբ Տիգրանը միտն էր բերում  
Իւ սիրելի մեծ բրոց:

Աշխատում էր մի ելք գտնել,  
Որ այն տեղից նա գալ ողջ:  
\* \* \*

Քերթսղահայր Խորենացին  
Սրտի աղնիւ թրթիւով  
Փառքանում է խնդազին՝  
Հակիբն բայց պերն խօսքերով.  
«Ո, գովում եմ քաջ նահատակ»  
Նիզակաւոր գեղեցկին,  
Մարմնի բոլոր անդամներով  
Պաշշաճաւոր դիւցազնին,  
Որ առոյգ էր ամեն բանում,  
Ուժով չժունէր իր նմանն...  
Ու սիրում եմ սպատմել, գովել  
Հայ արրայիս սպատուական»:  
Երբ պատերազմ սկսուեցաւ  
Հեծաւ իւր ձին գեղեցիկ  
Ու սլացաւ դէպ ախոյեան  
Ինչպէս սաստիկ մըրիկ,  
Ճոճեց նիզակ աջու ձեռքով,  
Զարկեց, ճեղբեց ջրի պէս  
Երկաթեայ պինդ զգեստները,  
Ճամփորեց նրան հաւի պէս  
Իւր նիզակի լայն, սուր ծայրն,

Ու ձեռքը յետ քաշելով  
Աժդահակի թոքի կէսը  
Դուրս բերեց նա նիզակով:  
Սակայն մարտն էր սքանչելի,  
Որովհետև քաջ մարդիկ  
Հանդիպելով լաւ քաջերի,  
Տէին ուզում, որ ուզմիկ  
Զօրքը թիկունք շուտ դարձնէ,  
Ու կոփւն էր երկարում.  
Բայց փառաւոր յաղթութիւնը  
Հայոց քաջերն են տանում:  
Նա, որ եղօրը մահ էր նիւթում,  
Գորովագութ ըրոջ ձեռքով,  
Մըժանի իսկ պատիժ առաւ  
Կործանուեցաւ իւր գահով:  
Ու Տիգրանը գերի բերեց  
Նորա Անուշ թագուհին,  
Տասն հազար էլ, տղայ, աղջիկ,  
Արաւ ծառայ, աղախին:  
Հայ գուտանի բամբոխ ձայնը  
Խըսխտագին տարածեց  
Ու հայ կուսի անուշ խաղին —  
«Լէ լէ»-ներին խառնուեց:  
Ողջ Այրարատ ոտքի ելած՝

Տօնում էր նոր յաղթութիւնն,  
Որ տարել էր Մեծն Տիգրան՝  
Դիւցաղն անմահ քաշագուն,  
Կործանելով Աժդահակին,  
Աւերել էր Մարաստանը,  
Ու իւր քըոջ Տիգրանուհուն  
Առել բերել Հայաստան:  
Ի՞նչ նոր երգեր — տաղ ու խաղեր  
Չէին լսում սար, ձորից  
Ի՞նչ եղանակ նոր ու ուրախ  
Չէր հնչւում հանդերից,  
Ուր հայ գեղջուկն հարսն ու աղջիկ  
Պար խաղալով են զովում  
Ու Տիգրանին աստուածներից  
Բարձր համարած են պատռում,  
Իսկ քրոջը Տիգրանուհուն  
Լուսնի նման թագուհուն  
Բնդունում են ոչ հողեղին,  
Ծյլ երկնային գօրութիւն,  
Որ յաւէրժ է, անյաղթելի,  
Գիտէ փրկել հայրենիք,  
Ոչ ինչ բանի տեղ դնելով  
Դաժան մահւան արհաւիզը:  
Նազանիք ու զմայլանքի

Ֆիւթիչ ճեմով պուրս նկատ  
Պարփ միջից մի աննման  
Լուսաթաթախ սիրազրաւ.  
Սա մի կոյս էր չնաշխարհիկ,  
Բարձրահասակ դեղեցիկ,  
Կասես իշխող լինէր երկրին  
Ու երկնքին կապուտիկ,  
Ու հրամայող արեգակին.  
Թէ, «մի ծագիր, դու պահուիր,  
Քո փոխարէն ես լոյս կտամ  
Հայ աշխարհին անձանձիր.  
Իմ կուսական ջերմութիւնով —  
Ո՞հ, իմ սիրոյ արևով  
Ծի ծաղկի թող մեր երկիր  
Խնչպէս վարդն ալ թերթերով։  
Դա բամբիշն էր՝ Վարդպէսի դռւստը,  
Որին Վահագն աշք ունէր,  
Դոյն գոյն ծաղկից հիւսած պսակ  
Բերում էր որ պսակէր  
Դիւցազնուհի Տիգրանուհու  
Խելոք գլուխն անվեհեր,  
Որ կենդանի նահատակ էր

Ազգի համար անձնուէր։  
Սա առնելով վառքի պսակն  
Ասաց քաղցրիկ խօռերով.  
— Բամբիչ անուշ, իմ նազելի,  
Պսակ դրիր իմ զլիսին,  
Որ հիւսել թարմ ծաղիկներից  
Բուսած հայոց սարերին,  
Բիւր անզամ հաճելի է  
Այս քո մի ծիզ, ոիրական,  
Քան այն թազը ականակուռ  
Անզին քարով պատուական,  
Որով զլուխս զարդարում էր  
Մարաց արքան անսլիտան,  
Ու ճոխութեան մէջ պահում էր,  
Որ մոռնայի Հայաստան,  
Սակայն ահա, չընազ հրեշտակ,  
Ես զրկեցի ինձ կամքով  
Տիկնաց տիկին մեծ տիտղոսից,  
Որ զլուխդ իմ ձեռքով.  
Պիտ զարդարեմ Հայոց տիկնոջ  
Արժանի վեհ ծածկութակ։  
Ինձ ձօն բերիր վառքի պսակ

Ահա կտամ մի մանեակ,  
Որ միշտ կախես պարանոցէլ  
Իբրև սիրոյ նշանակ,  
Որ տածում է քեզ, աննման  
Քո քեռու տուն, Երւանդեան:

ԵՐԳ ՀՈՐԻՌՈՐԴ

Ո՞վ է արդեօք այդ սէգ գիւցազն,  
Ոսի սաքի դովիւնից  
Մեր վիթխարի Կովկաս սարը  
Դղբում է իւր հիմքից.  
Տեսէք ահա մեծ աշքերը  
Ինչպէս երկու արեգակ  
Սրձակում են ջերմ ճառագայթ—  
Պայծառ լոյսի նշանակ:  
Ո՞հ, մազերը կըակի պէս  
Հուրհում են զեփիւռից,  
Խոկ մօքուրը բոցավառուած  
Թափում շանթեր իւր ծայրից:  
Է հէ, այդ ինչ ունի բռնած  
Իւր ահազին աշ ձեռքով.  
Զէնը է արդեօք, թէ մի զերան  
Պոկւած իրեն արմատով:


2է, սա մարդ չէ մեզի նման,  
Ով զերագոյն մի էակ:  
Զարհուրելի պէտք է լինի,  
Երբ որ շտաք պատիւ յարդ:  
Այսպէս շշմած՝ հարցեր տալով,  
Ողջ Վրաստան դիտում էր  
Հրաբորքոք նորա երես  
Ու զարնուրած կսպասէր:  
—Վահակն էր զա' Մեծ Տիգրանի  
Վիշապարադ վէճ որդէն  
Երկինք, երկիր, ծիրանի ծով  
Ճաւ քաշեցին միասին,  
Որ ծնեցին արքայորդին,  
Այդ աննման հսկային.  
Ծովի մէջ, որ ցաւ էր քաշում  
Նար մի կարմիր եղէզնիկ.  
Այդ եղեղնի ծալի միջից  
Դուրս ենում էր ծովի մուխիկ.  
Ու բոց սաստիկ էր դուրս զալիս,  
Որ բռնել էր ծովն համակ  
Բոցի միջից դէպ դուրս վազեց,  
Ծնաւ արքան՝ պատանեակ:  
Զեռքինն է վիրդ (լախտ), որով ջնջեց  
Վիշապներին թունաւոր,

Ու մեր երկիբն ազատելով,  
 Պարզեց մեզ կեսնք անդորր:  
 Մի ձմեռ օր արխն Վահագն  
 Ասորեստան արշաւեց  
 Ու Բարշամի ամբողջ յարդը  
 Գողացաւ ու Ճակ կացաւ  
 Պարզ երքնքում, յարդգովի հետք  
 Դեռ մնում է մինչ օրը.  
 Որովհետև մանր յարդեր  
 Թափիթիեցան փախչելիս:  
 Երբ իմացաւ այս բոլորը  
 Վրաց ազգը միաբան  
 Նրա արձանն կանգնեցընց  
 Իրենց երկրում անխափան,  
 Ու պաշտում էր երկար տարի  
 Խունկ ու զոհով օրհնարան:  
 Աստուածած այս դիւցազնիս  
 Ուկի արձան փառաւոր  
 Պաշտում էին Աշտիշատում  
 Ոքաչ արքայ երկնաւոր:  
 Երկրի վրայ դշխոյ ունէր  
 Հրաշագեղ բարեիշին  
 Խոկ երկնքում ոսկիամայը  
 Խնամատար Աստղիկին:

Հայկեան ցեղի վեհ դիւցազներն  
 Այնքան առաջ են գնում  
 Որ ոչ միայն աստծու ազգ  
 Կամ իշու աստուած են կոշում:  
 Այլ ժադուկուրդ ուղիղ աստուած  
 Ընդունելով էր պաշտում:  
 Տաճար կանգնում, երկրի վրայ  
 Ոսկի, մատադ նւիրում,  
 Երկնքումն էլ աստղերից վեր  
 Նրան ստեղծող ճանաշում:  
 Ողջ Հայաստան Մեծ Տիգրանին  
 Կունդ Արամազդ անունով  
 Պաշտում էր ու տաճար շինում,  
 Անշափ զոհով պատսւելով:  
 Դա վեհազոյն արարիչն էր  
 Հայոց ազգի պաշտպանը  
 Աստուածների հայրն ու տէրն էր  
 Անւայ մէջն էր արձանը:  
 Որդին էին արի ու մէծ  
 Հային կեանք, բաղդ պարզեով.  
 Խոկ Վահագնի՝ այս հայկական  
 Հերակլէսի դստերքն են  
 Ոսկիամայը ու Ոսկիահատ  
 Եւ Ոսկիածին, կուսրերն են

Ոսկուց ձուլած մեծ արձաններ  
Դրած են «Սենեալին Վահագնի»  
Վահեվանեան մեծ մեհենում  
Դրախտահոս Եփրատի:  
Կար արդեօք մի ծաղկաւէտ սար  
Կամ մի անտառ հովասուն  
Եւ կամ մի գետ կարկաչասահ,  
Ուր շըշինւէր մեհեան, տուն.  
Նրա մէջը շըպաշտւէր  
Ժողովրդի սիրելին  
Ծաղիկ, պտուզ ձօն շըբերւէր  
Աստւածացեալ գիւցազնին:

Վերջ ա. մասի.



ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Զարգածու գրւածներ

- 1) Հայոց Քաջեր ա. մ., որում երգում են՝ լազանց հալսուութեան ժամանակւայ դիւցաղները
- 2) » » մ —Արշակունեաց
- 3) » » գ. մ. —Մարզպանների և Սատիկանների
- 4) » » գ. մ. —Բազրատունեաց
- 5) » » ե. մ. —Ռուբինեաց
- 6) » » զ. մ. —Անիշխանութեան՝ մինչև Դաւիթ բէգը.
- 7) » » է. մ. —Մեր ժամանակւայ հերոսները.  
(այս մասը բոլորից ճոխն է իւր նիւթովն ու տեսակովը):
- 8) Աշուա Ողորմած, սոցիալական պօչմա, 200 երեսից.
- 9) Իմ կուռքս. գիւցազներգութիւնն
- 10) Բանաստեղծութիւններ, հարիւրից աւելի:

Ա. ը ձ ա կ գ ը ւ ա ծ ն ե ր

- 11) Նախօ, տաճկահայ գաղթականների կեանքից, վէպ:
- 12) Հին գայլեր, նոր աղուէմներ, դիւղական կեանքից վէպ.
- 13) Կողբեցի Մարտիրոսը, պատմական վէպ.
- 14) Նոր վէպ, հջմիածնի վանականների կեանքից.  
և ուրիշ զանազան ճանապարհորդական, հնագիտական և թարգմանական գրւածներ, բոլորն էլ պատրաստ են տպագրութեան համար:



58218

